ՍՈԼԱՔ ԶԱԴԵ

Մուհամմեդ էֆենդի Սոլաք Զադեն XVII դարի թուրք պատմագիրներից է։ Նրա գրչին է պատկանում «Սոլաք Զադե Թարիխի» վերնագրով գիրքը, որն ընդգրկում է օսմանյան պետության պատմությունը՝ նրա հիմնադրումից մինչև 1053 (1643—1644) թվականը։

Սոլաք Զադեի պատմության հրատարակիչը գրքի առաջաբանում գրել է. «Մուհամմեդ էֆենդին այն ժամանակի օսմանյան լեզվի արտահայտություններով ու ոճով գրած «Թարիխ»-ում ընդգրկում է 699 թվականին Կոնիայում կործանված Սելջուկյան պետությունից հետո 700 թվականին հիմնված օսմանյան պետության մինչև 1053 թվականը տեղի ունեցած դեպքերը։ Բիրքը ճշտելու և հրատարակելու հնարավորություն մինչև հիմա չի եղել։ Սոլաք Զադեի պատմության ձեռագրի օրինակները շատ հազվագյուտ էին։ Միայն 1298 (1880—1881) թվականին հնարավոր եղավ այն տպագրել Ստամբուլում՝ Բաբը Ալիի մոտ գտնվող Մահմուդ բեյի տպարանում»։

Սոլաք Զադեի պատմությունը 773 էջ է։ Գրքի սկզբում տրված է բովանդակությունը։ Հետո գալիս է օսմանյան սուլթաններին ձոնված ոտանավորը՝ Օսմանից սկսած մինչև սուլթան Իբրահիմը (1049—1058)։

Սոլաք Զադեի պատմությունը գրված է տարեգրության ձևով։ Լեզուն պարզ է և հասկանալի. կան շատ բանաստեղծական տողեր, մի գրելաձև, որն, ինչպես հայտնի է, ընդունված էր այդ դարաշրջանի պատմագիր-տարեգիրների մոտ։

Սոլաք Զադեի պատմությունից քաղված և թարգմանված նյութերը վերաբերում են գլխավորապես թուրք-իրանական պատերազմներին և Աբազա փաշայի ապստամբության դեպքերին։ Թուրքական այլ աղբյուրներից այդ նույն դեպքերի մասին բավականաչափ նյութեր բերվել են սույն գրքում. այդ պատճառով Սոլաք Զադեի նյութերը կարող են կրկնություն համարվել։ Սակայն նկատի ունենալով այդ դեպքերի կարևորությունը մեր պատմության, հատկապես Երևանի պատմության համար, այստեղ չենք խուսափել այդ կրկնությունից, մանավանդ, որ թուրք պատմագիրները միմյանց կրկնելով հանդերձ, տալիս են նաև որոշ մանրամասնություններ, որոնք կարող են լուսաբանել մեր պատմության հետ կապված առանձին հարցեր։

Սոլաք Զադեն լրիվ ինքնուրույն և հեղինակավոր պատմագիր չէ, ինչպես Նայիման, Քյաթիբ Չելեբին և Սելանիկին։ Ինչպես պարզվում է նրա «Թարիխի» բովանդակության ուշադիր վերլուծումից, նա բավականաչափ օգտվել է մյուս թուրք պատմագիրներից՝ առանց այդ մասին հիշատակելու։ Այդ պատճառով Սոլաք Զադեի պատմությունից այստեղ բերվում են սահմանափակ քանակությամբ նյութեր։